

### ՆԻՆԱ ԿՈՒՑԱՆՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քաղաքացիական և քաղաքացիական  
դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



## ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը նվիրված է քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկի՝ ժառանգման իրավունքի հասկացությանը և էությանը:

Աշխատանքում խոսվել է այն մասին, որ ժառանգումը չնայած կապված է սեփականության իրավունքի հետ, այնուամենայնիվ դրանք տարբեր ինստիտուտներ են, և ընդհանրացնելը ամենևին էլ արդարացված չէ: Ուստի և առաջարկություն է ներկայացվել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը», ենթարկելու փոփոխման՝ նոր խմբագրմամբ. հիշյալ հոդվածով «իր սեփականությունը կտակելու իրավունքը» նախատեսելը նպատակահարմար չէ: Դրանով իսկ սահմանափակվում է կտակի ազատությունը, քանի որ նշվում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը», մինչդեռ կտակարարն իրավասու է կտակ կազմել նաև ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ:

Վերլուծության է ենթարկվել քաղաքացիական իրավունքի գիտության մեջ առավել վիճահարույց հարցերից մեկը՝ ժառանգատուի կյանքի վերջնական պահի հստակ որոշման հարցը:

Աշխատանքում մանրամասնորեն ներկայացվել են ժառանգման կարգով քաղաքացիական իրավունքների և պարտականությունների փոխանցումը բնութագրող հատկանիշները:

**Հիմնարար քառեր** - ժառանգման իրավունք, քաղաքացիական իրավունք, սեփականության իրավունք, կտակ, ժառանգման օրյեկտ, ժառանգ:

Ժառանգման իրավունքը քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից է, քաղաքացիական իրավունքի ենթաճյուղ, որի հիմնական դրույթները մշակվել են դեռևս Հին Հռոմում: Դա պայմանավորված է նրանով, որ այն անխզելիորեն կապված է քաղաքացիների սեփականության իրավունքի հետ: Այնուհետև դրանք վերարտադրվել են այլ երկրների, առաջին հերթին՝ մայրցամաքային երկրների օրենսդրության մեջ:

Ժառանգման իրավունքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունք է: Դա է մասամբ վկայում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Եվ քանի որ սեփականատերն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը, ուստի նա կարող է նախընտրել իր կենդանության օրոք կարգադրություն անել այն մասին, թե իր մահվանից հետո ում անցնի իր գույ-

քը: Այս հարցում նա լրիվ ազատ է և ոչնչով կաշկանդված չէ:

Ժառանգման իրավունքը քաղաքացիական իրավունքի համակարգում յուրօրինակ ինստիտուտ է, որի ուժով քաղաքացու սեփականությունը հանդիսացող գույքն իր մահից հետո անցնում է այլ անձանց<sup>1</sup>: Եթե չլիներ ժառանգման ինստիտուտը, և քաղաքացուն (ժառանգատուին) պատկանող բոլոր իրավունքներն ու պարտականությունները դադարեին նրա մահվամբ, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպիսի քառային իրավիճակ կստեղծվեր այն անձանց հարաբերություններում, որոնք մշտապես բնակվել են ժառանգատուի հետ: Հատկապես դա բացասաբար կանդրադառնար վերջինիս ընտանիքի անդամների՝ առաջին հերթի ժառանգների վրա, որոնք կզրկվեն իրենց գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներից:

Այսպիսով, ժառանգումը մահացած քաղաքացու (ժառանգատուի) իրավունքների ու պարտականությունների՝ օրենքով սահմանված կարգով այլ անձանց՝ ժառանգներին փոխանցումն է: Այդ առ-

թիվ առաջացած հարաբերությունները կարգավորելու նպատակ հետապնդող նորմատիվ ակտերի ամբողջականությունն էլ կազմում է ժառանգման իրավունքը<sup>2</sup> :

Ժառանգման էությունը կայանում է նրանում, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իր կյանքի ընթացքում աշխատում և ստեղծում է բարիքներ (գույք), որոնք կարող են իր իսկ կամքով կազմված կտակի, իսկ դրա բացակայության դեպքում՝ օրենքի հիման վրա փոխանցվել կտակով կամ օրենքով որոշված անձանց:

Ինքնին ժառանգումն անհրաժեշտ է եղել բոլոր հասարակարգերում՝ անկախ սոցիալ-տնտեսական իրավիճակից, որը գոյություն է ունեցել տվյալ հասարակարգում: Ժառանգումը՝ որպես իրավական ինստիտուտ, ձևավորվել է դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում, մարդկության զարգացման առաջնային փուլում, երբ մահացածին պատկանող գույքը (որսորդական զենքերը, ձկնորսական պարագաները, կենդանիների մորթիները) ժառանգաբար փոխանցվել է հորից որդուն և տոհմին: Ի դեպ, որդուն են փոխանցվել ոչ միայն հորը պատկանող իրերը, այլ նաև հոր իրավունքներն ու լիազորությունները<sup>3</sup> :

Ժառանգման իրավունքի վերաբերյալ առանձին գլուխ է նվիրված եղել նաև 1923թ. փետրվարի 13-ին ընդունված Հայկական ԽՍՀ քաղաքացիական օրենսգիրքում:

Քաղաքացիական իրավունքի այս ինստիտուտին է նվիրված Հայաստանի Հանրապետության գործող, 1998թ. մայիսի 5-ին ընդունված քաղաքացիական օրենսգրքի տասնմեկերորդ բաժինը:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ քաղաքացիական օրենսգրքի կանոններով:

Հայաստանի նոր քաղաքացիական օրենսգրքով ժառանգման առանձին հարցեր սկզբունքային նոր լուծումներ ստացան: Նախ առաջին պլանի վրա դրվեց ըստ կտակի ժառանգումը, նոր միայն ըստ օրենքի ժառանգումը<sup>4</sup> :

Անհրաժեշտ է նշել, որ ժառանգման իրավունքը սերտ կապի մեջ է գտնվում քաղաքացու սեփականության իրավունքի հետ<sup>5</sup>, որն արտահայտվում

է նրանով, որ ժառանգման իրավունքը առաջանում է սեփականության իրավունքի արդյունքում: Սակայն հարկ է նշել, որ սեփականության իրավունքը և ժառանգման իրավունքը տարբեր ինստիտուտներ են, և դրանք ընդհանրացնելը ամենևին էլ արդարացված չէ: Ուստի և համաձայնելով քաղաքացիագետ Հ. Է. Հարությունյանի դիտարկմանը, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը», կարիք ունի ճշգրտման՝ նոր խմբագրման: Միևնույն հոդվածով «իր սեփականությունը կտակելու իրավունքը» նախատեսելը նպատակահարմար չէ: Ինչպես արդարացիորեն նշում է Հ. Է. Հարությունյանը, դրանով իսկ սահմանափակվում է կտակի ազատությունը, քանի որ նշվում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը», մինչդեռ կտակարարն իրավասու է կտակ կազմել նաև ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ<sup>6</sup>: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ երկրի հիմնական օրենքում ամրագրված չէ նաև գույք ժառանգելու՝ ՀՀ քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը տարբերում է ժառանգման երկու հիմք՝ օրենքը և կտակը: Դրա հետ մեկտեղ տարբերում է ժառանգման երկու եղանակ՝

1. ժառանգումն ըստ կտակի,
2. ժառանգումն ըստ օրենքի:

Քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական իրավունքի որևէ այլ ինստիտուտ չի կարող կիրառվել գույքի իրավահաջորդության կարգավորման համար: Այսինքն՝ արգելվում է քաղաքացու որևէ գործարքը՝ ուղղված մահվան դեպքում իր գույքի օտարմանը: Այդ նպատակով կարող է կիրառվել միայն կտակի ինստիտուտը<sup>7</sup>: Դրանով է բացատրվում այն, որ ժառանգմանը տրվում է «բացառիկ» բնորոշում: Ժառանգման բացառիկությունը բնութագրվում է նրանով, որ այն մահացած քաղաքացու գույքն այլ անձանց փոխանցելու միակ հիմքն է<sup>8</sup>:

Ժառանգման օբյեկտը կարելի է բնորոշել որպես քաղաքացուն մասնավոր սեփականության իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև գույ-

քային և ոչ գույքային իրավունքների ամբողջությամբ: Համապատասխանաբար ժառանգումը քաղաքացու մահից հետո նրան մասնավոր սեփականության իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև գույքային և ոչ գույքային իրավունքների փոխանցումն է՝:

Այս փոխանցումն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- այն իրականացվում է ունիվերսալ (համապարփակ) իրավահաջորդության կարգով, այսինքն՝ մահացածի իրավունքներն ու պարտականությունները հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն,

- մահացածի բոլոր իրավունքներն ու պարտականություններն են անցնում ժառանգներին,

- ժառանգատուի իրավունքներն ու պարտականություններն անցնում են իր ժառանգներին միաժամանակ,

- ժառանգումն իրականացվում է իրավահաջորդության կարգով. իրավահաջորդին անցնող իրավունքներն ու պարտականությունները կախված են դրանց իրավանախորդից: Սա նշանակում է, որ կարող են փոխանցվել միայն այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք ժառանգատուն ունեցել է, և դրանք չեն կարող լինել ժառանգատուի ունեցածից շատ<sup>10</sup>:

Մահացած քաղաքացու գույքն այլ անձանց իրավահաջորդությամբ փոխանցելը նշանակում է, որ պահպանվող իրավահարաբերություններում տեղի է ունենում միայն գույքի նկատմամբ իրավունքի սուբյեկտի փոփոխություն: Այսինքն՝ իրավահաջորդի (ժառանգի) իրավունքներն ու պարտականություններն իրավաբանորեն կախված են իրավանախորդի (ժառանգատուի) իրավունքներից ու պարտականություններից:

Ինչպես արդեն նշվեց, մահացածի գույքի ժառանգումը տեղի է ունենում ունիվերսալ իրավահաջորդության կարգով, այսինքն՝ անփոփոխ վիճակում՝ որպես մեկ միասնություն: Դա նշանակում է, որ ժառանգությունը դիտարկվում է որպես մեկ ամբողջություն՝ անկախ նրանից՝ որտեղ է այն գտնվում, և հայտնի է արդյոք դրա գտնվելու վայրը: Այսինքն՝ ժառանգության որոշակի (հայտնի) մասի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելով՝ ժառանգները ձեռք են բերում նաև այլ (իրենց անհայտ) գույքի նկատմամբ իրավունքներ:

Ժառանգությունը՝ որպես իրավահաջորդու-

թյան առարկա, ժառանգներին է անցնում անփոփոխ վիճակում, այսինքն՝ այնպես, ինչպես եղել է ժառանգության բացման պահին: Այսպես, գրավ դրված գույքը ժառանգելու դեպքում գրավի իրավունքը չի դադարում: Գրավատուի իրավահաջորդը կրում է գրավատուի բոլոր պարտականությունները, եթե առաջին գրավատուն գրավառուի հետ նախապես այլ բան չի սահմանել<sup>11</sup>:

Ժառանգելը քաղաքացու իրավունակության բովանդակության տարրն է, նրա դրսևորումներից մեկը: Նշանակում է՝ նման իրավունակությամբ օժտված են Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, և որ ժառանգման կոնկրետ իրավունքի ձեռքբերման նախադրյալ է հանդիսանում քաղաքացու իրավունակությունը<sup>12</sup>:

Ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգման համար անհրաժեշտ է, որ վրա հասնի այնպիսի իրավաբանական փաստ կամ միմյանց հաջորդող այնպիսի փաստեր, որոնց հետ օրենքը կապում է ժառանգման իրավահարաբերությունների առաջացումը: Այդպիսի իրավաբանական փաստ է հանդիսանում ժառանգատուի մահը: Այսինքն՝ թե՛ ըստ օրենքի, թե՛ ըստ կտակի ժառանգման համար հիմնական նախապայման է հանդիսանում ժառանգատուի մահը, որով բացվում է ժառանգությունը: Հետևաբար, մահվան փաստը դիտվում է որպես ժառանգության բացմանը հասցնող բավարար ու անհրաժեշտ միակ պայման:

Ներկայումս գիտության մեջ առավել վիճահարույց է կյանքի վերջնական պահի հստակ որոշման հարցը: Վիճահարույց այս հարցը լուծելու առումով կարևորվում է 2002թ. ապրիլի 16-ին ընդունված «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու» մասին ՀՀ օրենքը: Այս օրենքի 1-ին հոդվածի համապատասխան՝ ուղեղի մահը գլխուղեղի կենսագործունեության լրիվ և անդառնալի դադարումն է, որը գրանցվում է աշխատող սրտի և թոքերի արհեստական օդափոխության պայմաններում: Ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան<sup>13</sup>:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ժառանգության բացման ժամանակ է համարվում քաղաքացու մահվան օրը, իսկ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում այդ ակտերը գրանցելու ժամանակի ավելի ճշգրիտ որոշում, քան տարին, ամիսը և ամսաթիվն է, չեն նախատեսում: Հետևաբար՝ օգ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տագործվում է «ժառանգության բացման ժամանակ» հասկացությունը: Եվ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո, մահացած են ճանաչվում միաժամանակ: Ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրից հետո, և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները: Այս հարցը նույն ձևով է կարգավորվում նաև ՌԴ քաղաքացիական օրենսգրքի կողմից: Իսկ ԱՄՆ-ում, ի տարբերություն ՀՀ և ՌԴ օրենսդրության, կիրառվում է «ժառանգության բացման պահ» հասկացությունը, այսինքն՝ որոշվում է օրով, ժամով և րոպեով<sup>14</sup>: Կարծում ենք, որ ԱՄՆ-ն այս հարցի լուծմանը ավելի ճիշտ է մոտեցել, քանի որ երբեմն հարկ է լինում որոշել ոչ միայն քաղաքացու մահվան օրը, այլև ժամը, անգամ րոպեն: Դրա անհրաժեշտությունն առաջանում է այն ժամանակ, երբ տարերային աղետների, հանցագործությունների, պատահարների հետևանքով հարազատները մահանում են գրեթե միաժամանակ: Եվ այս դեպքում այլևս հարկ չի լինի նրանց միաժամանակ մահացած ճանաչել:

Այդպիսի անձինք քաղաքացիական իրավունքում կոչվում են կոմմորիենտներ (commorientes-միաժամանակ մահացողներ)<sup>15</sup>: Քանի որ քաղ. օր.-ի 1188-րդ հոդվածի համաձայն ժառանգության բացման ժամանակ է համարվում քաղաքացու մահվան օրը և ոչ թե ժամը կամ րոպեն, ուստի կոմմորիենտներ պետք է համարել նաև այն անձանց, ովքեր չնայած մահացել են տարբեր ժամանակներում, սակայն միևնույն օրվա սահմաններում (24 ժամվա սահմաններում)<sup>16</sup>: Նշվածից կարելի է ենթադրել, որ այս հարցը ՀՀ օրենսդրությունը թերի է կարգավորել, հետևաբար, կարծում ենք, ճիշտ կլիներ, եթե ժառանգության բացման ժամանակը որոշվեր ոչ թե քաղաքացու մահվան օրով, ինչպես նշված է գործող քաղ. օր.-ի 1188-րդ հոդվածում, այլ քաղաքացու մահվան պահով:

Այսինքն, երբ բացվում է ժառանգությունը, պետք է լինի.

- քաղաքացու մահվան փաստը հաստատող փաստաթուղթ, եթե մահը վրա է հասել ծերության, հիվանդության կամ այլ պատճառներով,

- դատարանի վճիռը, եթե դատարանը քաղաքացուն հայտարարել է մահացած:

Քաղաքացու մահվան պահի, և նույնն է՝ ժառանգության բացման ժամանակի որոշումը գործ-

նական նշանակություն ունի ժառանգման իրավունքի առանձին հարցեր, այդ թվում և ժառանգության ընդունման հետ կապված հարցեր լուծելու համար:

Նախ, մինչ ժառանգության ընդունման հարցին անդրադառնալը պետք է պարզել այն անձանց շրջանակը, ովքեր կարող են ժառանգ լինել, այսինքն՝ ընդունել ժառանգությունը, որը և որոշվում է ժառանգության բացման պահով: Քաղ. օր.-ի 1190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները: Ուրեմն, եթե ժառանգատու ուներ երկու զավակ, որոնցից մեկը մահացել է իրենից առաջ, այսինքն՝ նախքան ժառանգությունը բացվելը, ապա հասկանալի պատճառով մահացածին ժառանգ համարել չի կարելի:

Մինչև ժառանգության ընդունումը կարևոր նշանակություն ունի նաև ժառանգական զանգվածի ծավալը, շրջանակը որոշելը, այսինքն՝ այն ժառանգությունը, որը կարող են ընդունել ժառանգները, որը ևս որոշվում է ժառանգության բացման պահով: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգական զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքներն ու պարտականությունները: Հետևաբար, մինչև ժառանգատուի մահը նրա գույքի նկատմամբ մեկ ուրիշը օրինական կերպով ձեռք է բերում սեփականության իրավունք, թեկուզ և դատելի ունեցած լինի նրա մահվան օրվան նախորդած օրը, ապա այդ գույքը չի կարող մտնել ժառանգական զանգվածի մեջ, ուստի և ժառանգը չի կարող այն ընդունել: Դրա հետ մեկտեղ, բոլոր այն պտուղներն ու եկամուտները, որոնք կարող են առաջանալ կամ ստացվել ժառանգության բացման օրվանից մինչև գույքը ժառանգի սեփականությանն անցնելու պահն ընկած ժամանակահատվածում, ավելանում են ժառանգին հասանելիք բաժնին: Դրան համապատասխան բոլոր այն ծախսերը, կորուստները, որոնք կապված են ժառանգության հետ նրա բացումից հետո (օրինակ՝ գույքը պահելու ծախսերը), դարձյալ կապվում են ժառանգական գույքի հետ: Այդ բնույթի պարտքե-

որ ոչ թե ժառանգատուինն են, այլ՝ ժառանգների-  
նը<sup>17</sup> :

Ժառանգության բացման ժամանակը որոշելը գործնական նշանակություն է ստանում հենց կոնկրետ ժառանգությունն ընդունելու, ժառանգությունն ընդունելուց հրաժարվելու հետ կապված հարցերը լուծելու ժամանակ: ՀՀ քաղ. օր-ի 1227-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, իսկ ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից դարձյալ 6 ամսվա ընթացքում (քաղ. օր. 1230):

Հարկ է նկատել, որ ժառանգության ընդունումն արտահայտվում է ժառանգի կամաարտահայտությամբ, քանզի առանց ժառանգության ընդունման, այսինքն՝ առանց ժառանգի համաձայնության քաղաքացու մահից հետո նրա իրավահաջորդությունը հնարավոր չի լինի: Հետևաբար, ինչպես արդարացիորեն նշում է Հ. Է. Հարությունյանը, ժառանգի ժառանգության ընդունման իրավունքը նրա կամաարտահայտությամբ կարող է վերափոխվել իրավահաջորդության<sup>18</sup> :

Այսպիսով, ժառանգման կարգով քաղաքացիական իրավունքների և պարտականությունների փոխանցումը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- փոխանցման հիմք է հանդիսանում ժառանգման իրավունքի նորմերով նախատեսված բարդ փաստական կազմը,

- փոխանցվող իրավունքներն ու պարտականությունները կազմում են որոշակի միասնություն, որը կոչվում է ժառանգություն կամ ժառանգական գանգված,

- իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերած անձը՝ ժառանգը, համարվում է մահացածի անմիջական ընդհանուր (ունիվերսալ) և ոչ թե մասնավոր (սինգուլյար) իրավահաջորդ<sup>19</sup> :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է նշել, որ ժառանգման ինստիտուտը քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից է, որի միջոցով որոշվում է մարդու մահից հետո նրա գույքի հետագա ճակատագիրը, ապահովվում է ժառանգատուի գույքային իրավունքների ու պարտականությունների և անձնական ոչ գույքային որոշ իրավունքների փոխանցումը իր ժառանգներին, ինչպես ժառանգատուի կամքի դրսևորմամբ, այնպես էլ օրենքի ուժով:

<sup>1</sup> Տե՛ս Հարությունյան Հ. Է. Ժառանգումն ըստ կտակի, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 5:

<sup>2</sup> Տե՛ս Ղարախանյան Գ. Հ., Բարսեղյան Ս. Կ., Հայկյանց Ա. Մ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, 3-րդ մաս, Եր., 2003, էջ 188:

<sup>3</sup> Տե՛ս Толстой Ю. К. Наследственное право, учебное пособие, Проспект, М., 1999, С. 3-5.

<sup>4</sup> Տե՛ս Հարությունյան Հ. Է. Ժառանգումն ըստ կտակի, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 12:

<sup>5</sup> Տե՛ս Ղարախանյան Գ. Հ. Ժառանգման իրավունք, ուսումնական ձեռնարկ իրավաբանական ԲՈՒՀ-երի և ֆակուլտետների ուսանողների համար, ԵՊՀ հրատ., Եր. 2000, էջ 25:

<sup>6</sup> Տե՛ս Հարությունյան Հ. Է. Ժառանգումն ըստ կտակի, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 13:

<sup>7</sup> Տե՛ս Наследственное право, под. Ред. Ярошенко К.Б. М., 2005, С. 38.

<sup>8</sup> Տե՛ս Ярошенко К. Б. Новое законодательство о наследовании/ Хозяйство и право, 2002, N 2, С. 21.

<sup>9</sup> Տե՛ս Гушин В. В., Дмитриев Ю. А. Наследственное право и процесс, М., 2005, С. 60-61.

<sup>10</sup> Տե՛ս Корнеева И. Л. Наследственное право Российской Федерации, М., 2005, С. 12-13.

<sup>11</sup> Տե՛ս Наследственное право, под. Ред. Ярошенко К.Б. М., 2005, С. 40-41.

<sup>12</sup> Տե՛ս Ղարախանյան Գ. Հ., Բարսեղյան Ս. Կ., Հայկյանց Ա. Մ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, 3-րդ մաս, Եր., 2003, էջ 191:

<sup>13</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2002/16 (191), 29.05.02:

<sup>14</sup> Տե՛ս Паничкин В. Б., Боровик О. Я. Наследственное право США. Санкт-Петербург, 2006, С. 99-100:

<sup>15</sup> Տե՛ս Наследственное право, под. Ред. К.Б. Ярошенко, М., 2005, С. 47.

<sup>16</sup> Տե՛ս “Советская юстиция”, 1967, N 12, С. 10.

<sup>17</sup> Տե՛ս Անտիմոնով Բ. Ս. Գրաւե Կ. Ա. Սովետական ժողովրդական իրավունքներ. Մ., 1995, Ս. 98.

<sup>18</sup> Տե՛ս Հարությունյան Հ. Է. Ժամանակակից ըստ կտակի, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 16:

<sup>19</sup> Տե՛ս Ղարախանյան Գ. Հ., Բարսեղյան Տ. Վ., Հայկյանց Ա. Մ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, 3-րդ մաս, Եր., 2003, էջ 191:

**Նինա Կուսանյան**

Ասպիրանտ Կաթեդրայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական-պրոցեսուալ իրավունքի ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական-պրոցեսուալ իրավունքի ինստիտուտի Ռուսական-Արմենական (Տրանսլավոնական) համալսարանի

## РЕЗЮМЕ

### *Концепция и сущности наследственного права*

Работа посвящена одному из важнейших институтов гражданского права - концепция и сущности наследственного права.

В работе говорится о том, что несмотря на наследование связано с правом собственности, тем не менее, это разные учреждения, и их обобщение не является оправданным. Поэтому выдвигается предложение подвергнуть изменению 31 статью Конституции РА, согласно которой “каждый человек имеет право владеть, пользоваться, распоряжаться и завещать свое имущество по своему усмотрению” в новой редакции; согласно упомянутой статье: предпочитать “право на завещание своего имущества” не целесообразно. Этим свобода завещания ограничена, так как отмечается: «каждый человек имеет право владеть, пользоваться, распоряжаться и завещать свое имущество по своему усмотрению”, тем временем завещатель имеет право составить завещание также по отношению имущества, которое будет приобретено в будущем.

Был проанализирован один из спорных вопросов в науке гражданского права - вопрос четкого определения последнего момента жизни наследодателя.

В работе детально представлены характерные свойства передачи гражданских прав и обязательств в гражданском порядке.

**Ключевые слова:** право наследования, гражданское право, право собственности, завещание, объект наследования, наследник

**Nina Kutsanyan**

PHD student in civil Rights of Russian- Armenian Slavonic University

## SUMMARY

### *The concept and nature of inheritance law*

The work is devoted to one of the most important institutions of civil right – the concept and nature of inheritance law.

In the work it is also spoken about the question, that though the inheritance is connected with the property law, nevertheless, they are different institutions and their generalization is not justified. Therefore it is made a proposal to change RA Constitution 31 article, according to which “Every one has a right to master, use, dispose and bequeath his property at his discretion” in the new edition with the mentioned article: to prefer “the right to bequeath his property” is not appropriate. By this the freedom to bequeath is restricted, as it is mentioned: “Every one has a right to master, use, dispose and bequeath his property at his discretion”, though the testator has a right to compose a testament also concerning the property which will be acquired in future.

It was also analysed one of the controversial issues in the science of civil right – the issue of the testator’s life’s last moment clear definition.

In the work there are presented in details the characterizing properties of the order of the civil rights’ and obligations transmission succession.

**Keywords:** heirship, civil rights, property rights, testament, inheritance object, heir.